

Մի ելույթի առթիվ

Անդրադարձ ուղղագրական բանավեճին

Ակադեմիկոս Վարազդատ Հարությունյան

Հայկական ուղղագրության հարցը վերջերս առավել սուր քննարկման է ենթարկվում հայրենիքում ու սփյուռքում: Սփյուռքինը տեղյակ եմ Փարիզում հրատարակվող «Յառաջ» թերթի էջերից: Տպավորությունս այն է, որ մեր ուղղագրության հիմնադիրների քննարկմամբ հանդես են գալիս ինչպես արհեստավարժ լեզվաբաններ, այնպես էլ երկկողմ շահագրգիռներ: Խոստովանեմ, որ լեզվաբան չեմ, գուցե իրավունք չունեմ մասնակցելու օր-օրի թեժացող վեճերին: Սակայն հայ եմ, մտավորական, մեր ազգային մշակութային մեկի՝ ճարտարապետության պատմաբան, ուստի գործ ունեմ գրելու, հետեապես՝ ուղղագրության հետ:

«Ազգ» թերթի այս տարվա հուլիսի 6-ի համարում կարդացի ակադեմիկոս Լեւոն Հախվերդյանի «Ուրիշ բանագործ չունե՞ք, տիկին ու պարոններ» ընդարձակ ու հիմնավոր հոդվածը: Եվս մեկ անգամ համոզվեցի, որ դասական կամ Մերոպյան ուղղագրությունն իրոք բարեփոխելու կարիք ուներ եւ շնորհապարտ պիտի լինե՞ք դրա արարողներից: Բարեփոխումը նպաստեց, որպեսզի մեր ոսկեդեմ հայոց լեզուն չկառչի հինին, ազատագրվի գրաբարյան բարդություններից զարգանա ու արդիականանա, ինչպես դա տեղի է ունենում կյանքում ու մշակույթի բոլոր բնագավառներում: Առավել չափով համապատասխանի հայաստանցիների խոսակցական լեզվին, նպաստի ժողովրդի լայն զանգվածների գրագիտացմանը:

Բայց կան այլախոհներ, նույնիսկ հայրենիքում: Դրանց թվին է պատկանում բանաստեղծ Լեւոն Միրիջանյանը, որը բացառիկ մոլեռանդությամբ ու կրքոտ, այս էլ բանի անգամ հանդես է գալիս «Յառաջ» թերթում: Ծանարկելով «Մեկ ազգ, մեկ ժողովուրդ» կարգախոսը, նշավակում է հայոց նոր ուղղագրությունը, իր համախոհների հետ միասին, արեղյանական ուղղագրությունը պետական խեղագրություն, «սովետական», «բոլշեփկյան», ոմանք նույնիսկ «ստալինյան» անվանում:

Ձեռքիս է «Յառաջ» թերթի հուլիսի 5-ի համարը, որում տպագրված է Լեւոն Միրիջանյանի «Եւ դարձեալ եղիցի համազգային Մերոպեան ուղղագրութիւնը» հոդվածը: Դա նորից լեցուն է անհարգալից որակումներով վաստակաշատ լեզվաբան, ակադեմիկոս Գեորգ Ջահուկյանի ու նրա գլխավորած լեզվի ինստիտուտի աշխատակազմի հասցեին՝ առ ոչինչ համարելով գիտական այս հիմնարկի խոշոր ներդրումները հայոց լեզվի ուսումնասիրման ու զարգացման գործում: Առավել արտառոց է հնչում հոդվածի վերջում գրված կոչը. «...արդարացի կլինի ժամանակավորապէս լեզուբանութեան ինստիտուտի ճակատից՝ Հրաչեայ Աճառեանի սուրբ անուն-ազգանունը հանել, թէ չէ էդպէս ո՞նց կլինի...»:

Ծատ հեռու չգնացի՞ք, պարոն Միրիջանյան: Ո՞նց կլինի անտեղյակությամբ մեղանչել ճշմարտության դեմ: Չէ՞ որ դասական կամ Մերոպյան ուղղագրության բարեփոխման գաղափարը պատկանում է հենց ակադեմիկոս Հրաչյա Աճառյանին, մի մեծ գիտնականի ու լեզվագետի, որի հետ վիճելն ամոթ է:

Լեւոն Հախվերդյանը, այս էլ երկրորդ անգամ վկայակոչում է Հրաչյա Աճառյանի դիտողությունները դասական ուղղագրության վերաբերյալ: Հարկ եմ համարում մեջբերել:

«Գրաբարի բարեփոխելի կետերը հետեւյալներն են.

1. Բառավերջի **է** բաղաձայնից առաջ գրել **ե**;
2. Բառամեջի **օ** գրել **ու**:

3. Լ բաղաձայնը դարձնել Վ:

4. Բառավերջին անձայն յ չգրել (Հրաչեայ-հրաչա- Վ.Հ.):

5. Բառասկզբի յ գրել հ (Յարութիւնեան-Հարությունյան- Վ.Հ.):

6. Ոյ գրել ույ, եթե հնչում է այդպես»

(տես՝ «Լիակատար քերականություն հայոց լեզվի», հատոր 6, էջ 90):

Ուրեմն, պարոն Միրիջանյան, Ձեր կողմից մշտապես պարսավանքի արժանացվող «Աբեղյանական» ուղղագրությունը մեծապես համապատասխանում է հայ մեծ լեզվաբան Հրաչյա Աճառյանի դիտողություններին, Աբեղյանը դա հաշվի է առել:

Ուստի մերժելի է Ձեր առաջարկը՝ թեկուզ ժամանակավորապես «Լեզվի ինստիտուտից հանել Հրաչյա Աճառյանի անուն-ազգանունը»: Դուք հանդես եք բերել անտեղյակություն:

About a discussion on the armenian orthography

Academician V. Haroutiounian

Summary

In the article, Academician Haroutiounian mentions some notes about the need to reform the armenian classic orthography usually called “Mesropian” , then represents some notes about recently published articles about the same subject and at the end proposes some modification in the classic armenians, finally he concludes that new armenian orthography which was modified and proposed and is used over eight decades, in Armenia, is according to the ideas of Prof. Hrachia Ajarian and adapted with the needs of modern armenian language.

در باره شیوه نگارش ارمنی

آکادمیسین ورازادات هاروتیونیان

چکیده مقاله

در این مقاله، مؤلف ضمن اشاره به بحث های موجود درباره تغییر روش نگارش ارمنی که چه در ارمنستان و چه در کشورهای دیگر وجود دارد به چند مقاله که اخیراً در مطبوعات چاپ شده اشاره می کند و تغییراتی در زبان گرابار(کلاسیک) پیشنهاد می کند و نتیجه گیری می کند که شیوه نگارش جدید که توسط پروفسور مانوک آبیغیان حدود هشتاد سال پیش پیشنهاد کرده و تا امروز در ارمنستان و نزد ارمنیان برخی از کشورهای دیگر بکار می رود با نیازهای امروزی زبان ارمنی تطابق و تناسب کامل دارد. این امر مطابق با نظریات پروفسور هراچیا آجاریان زبانشناس نامی ارمنستان صورت گرفته است.

Երկտող Ջալալ Էդ-Ռիմ Ռումիից

Բ. Լ. Չուգասազյան

Պարսից դասական գրողներից միջնադարում հայերեն թարգմանված հազվագյուտ նմուշներից է Ջալալ Էդ-Ռիմ Ռումիի (1207-1272) մի երկտողը, որը պահպանված է Մաշտոցյան մատենադարանի No 6146 ձեռագրում, ժամանակ՝ 1700 թ.:

Երկտողը այս մատչանում հայատառ պարսկերենով ու գրաբար բարգմա-նոթյամբ բերված է ի հաստատումն աստվածային արարքների անքննելիության ու զարմանահրշոթյան. այպես՝

«Հազար քաշթի բա եկ դարիայ չի աճէպ աստ
Ռ [հազար] դարիայ բայ եկ քաշթի աճէպ ան աստ.

Լուծումն՝

Ռ[հազար] նա ի Ա [մէկ] ծով ինչ զարմանք է.
Ռ[հազար] ծով ի Ա [մէկ] նա զարմանք եւ հիանալի է:

Լուծումն՝

Թէ աստուած զարարածս տանի չէ զարմանք»(1):

Այս երկատողը Ռումիի հետեւյալ քառյակի երկրորդ արկատողի մի տարբերակն է: Քառյակը երկու անգամ օգտագործված գտանք 1901-1902 թ. Թեհրանում լույս տեսած «Մասնվիում».

کشتی وجود مرد دانا عجبت
افتاده بچاه مرد بینا عجبت
کشتی که به دریا بود آن نیست عجب
در یک کشتی هزار دریا عجبت(2)

Քաշթի վջուդ մարդե դանա աջաբ ասթ.
Օֆթադե բեչահ մարդե բինա աջամ ասթ.
Քաշթի քե բեդարիա բովադ ան նիսթ աջաբ,
Դար եք քաշթի հեզար դարիա աջաբ ասթ:

Բառացի թարգմանությունը.

Իմաստուն մարդու ներկայությունը նավի մեջ զարմանալի է.
Հորի մեջ տեսունակ մարդու ընկները զարմանալի է.
Նավը, որ ծովի վրա լինի, զարմանալի չէ,
Մեկ նավում հազար ծով լինելն է զարմանալի:

Ինչպես տեսնում ենք, միջնադարյան հայերեն թարգմանության մեջ հարազատորեն վերարտադրված է երկտողի բառախմաստը, որի անորոշությունն ու խորհրդավորությունն էլ պետք է եղել թարգմանչին, մինչդեռ իրականում Ռումին, որ սուֆի բանաստեղծ է, բառախաղով վերջին տողում տվել է ծովի սուֆիական նշանակությունը, այն է՝ աստվածային էակ իմաստով:

Հայատառ պարսկերեն այս եւ Ռումիից վերը բերված քառյակի երկտողերի մեջ կան փոքրիկ տարբերություններ. հայկական տարբերակը առաջին տողում մեկ նավի փոխարեն հազար նավ է դնում, իսկ երկրորդ տողում կա բառերի ետեւառաջություն.

հայկական տարբերակում **մեզ** բառը օգտագործված է բա (ب) արխաիկ պարսկերեն ձեով, մինչդեռ Ռումիից մեր բերած տարբերակում կիրառված է ավելի ուշ ժամանակների դար (د) ձեղը: Այս հանգամանքը խորհել է տալիս, որ հայ թարգմանչին հայտնի է եղել Ռումիի քառյակի մի ավելի հնագույն տարբերակ, որից եւ նա թարգմանել է:

Երկտողի հայ թարգմանչի ինքնությունը առաջմ մեզ հայտնի չէ. պարսկերենի հայկական տառադարձումից հաստատորեն միայն կարելի է ասել, որ նա եղել է Արեւելյան Հայաստանից:

Այս երկտողը Ջալալ էդ-Ռիմ Ռումիից առաջմ մեզ հայտնի առաջին հայերեն թարմանությունն է:

1. Մաշտոցյան մատենադարան, ձեռ. 6146, էջ 48-ա:

2-مثنوی معنوی مولانا جلال الدين محمد بلخی رومی با هفت کتاب نفیس دیگر. به تصحیح و مقابله و همت محمد رمضانی.

1319. تهران..

(Ջալալ էդ-Ռիմ Սոհամնեդ Բալխի Ռումի, Մասնավի մասնավի եւ յոթ այլ ընտիր երկեր, աշխատասիրությանը Սոհամնադ Ռամազանիի, Թեհրան, 11319/1901-20, էջ 3 եւ 14):

Around a couplet of Jalal-eddin-Rumi

Dr. B. L. Chougusian

Summary

Jalal-eddin-Rumi is an Iranian poet of medieval era (1207-1272). A couplet belonging to him is found in the National Library of M. Mashtots (famous as Matenadaran) of the year 1700. It is in armenian scripts but in persian language together with old armenian translation. The couplet states the unquestionability of God's acts.

در باره یک بیت از جلال الدین رومی

شادروان دکتر بابکن چوگاسزیان

چکیده مقاله

یک بیت از اشعار جلال الدین رومی متعلق به سال 1700م. تحت شماره 6146 در کتابخانه کتب خطی م. ماشوتس ایروان (معروف به ماتناداران) نگهداری می شود. این بیت با حروف ارمنی نگاشته شده و ترجمه زبان قدیمی ارمنی یا گرابار همراه آن می باشد. این بیت یکی از واریانت های بیت دوم سطور زیر است:

کشتی وجود مرد دانا عجیبت افتاده بچاه مرد بینا عجیبت

کشتی که به دریا بود آن نیست عجب در یک کشتی هزار دریا عجیبت

در مقاله این بیت و شباهت و اختلاف آن با متون فارسی بررسی می شود. تا آنجا که اطلاع داریم این بیت اولین

ترجمه ارمنی جلال الدین رومی است.

հեղինակների տեսակետներին: Այս դեպքում գիտությունն ականա հակվում է դեպի քաղաքականությունը:

-àá ĵ Ná. áóÙ ŠÈñ³ μ»ñÇ| ù ÇÝ³ Ýè³ Ĩ³ Ý Ĩ³ È è»ñÁ£

-Ցավոք, պետությունն ամենեւին ուշադրություն չի դարձնում ոչ միայն «Լրաբերին», այլև ԳԱԱ մյուս պարբերականներին: Երբեմն- երբեմն լինում են բարեսիրական ձեռնարկներ, բայց դրանք պատահական են եւ չեն կարող ապահովել «Լրաբերի» կայուն, հետետողական, պարբերական ընթացքը: Անհրաժեշտ է պետության միջամտությունը եւ հոգածությունը:

-ÆÝää ÇèÇ±á³ ñμ»ñ³ Ĩ³ ÝáoÃŦ Ûμ ĵ ÆóŦè Ĩ³ »èÝáoÙ ŠÈñ³ μ»ñÁ|£

-Նախապես եղել է ամսագիր, հրատարակվել է ամիսը մեկ անգամ: 1991թ. «Լրաբերը» հրատարակվեց երեք-չորս ամիսը մեկ, որպես քառամսյա հանդես: Անցյալ տարի լույս տեսավ մեկ համար, այս տարի, բարերարների շնորհիվ՝ երկուսը:

-àñá »è . ÆÈ³ í áñ È Ûμ³ . Çñ, ÇÝää ÇèÇ± Ý ó³ ÝĨ³ Ý³ Ŧ ù Ĩ³ »èÝ»È ŠÈñ³ μ»ñÁ| Ýáñ Ñ³ ½³ ñ³ ÛŦ³ ÝáoÙ£

-Կցանկանալի, որ հանդեսը հրատարակվեր ոչ միայն հայերեն եւ ռուսերեն, որ նրան աշխատակցեին սփյուռքահայ մտավորականները եւ օտարազգի հեղինակները, եւ որ, ի վերջո, «Լրաբերը» դառնար միջազգային հասարակագիտական ամսագիր: Կարծում եմ, բոլոր նախադրյալները կան: Եվ որքան էլ քրթմնջոցներ լավ են ու կասկածամիտ խոսքեր ասվեն այն մասին, թե հայագիտության կենտրոնը տեղափոխվել է արտասահման, միեւնույն է, հայագիտության կենտրոնը եղել եւ մնում է Երեւանը, Հայաստանը, եւ մենք ունենք այն ներուժը, որ պատրաստ է միջազգային հնչեղություն տալ ամսագրին:

Armenia has always been the center of Armenology

M. Grigorian

Summary

The article is dedicated to the 60-th anniversary of “Lraber” [Herald] bilingual armenological monthly a publication of Armenian National Academy of Sciences. For this occasion an interview with prof. Albert Kharatian, editor-in-chief of represented.

ارمنستان همواره مرکز ارمنی شناسی بوده است

م. گریگوریان

چکیده مقاله

امسال مصادف با 60-مین سال انتشار ماهنامه ارمنی شناسی و علوم اجتماعی “لرابر” (Lraber “پیک”) از انتشارات آکادمی ملی علوم ارمنستان است لذا به همین مناسبت مصاحبه ای با پروفیسور دکتر آلبرت خاراتیان سردبیر آن انجام گرفته و ارائه شده است.